

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՃ.
Պոլսոյ համար 10 ՄՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄՃ.
Պոլսոյ համար 5 ՄՃ.
Մանուկներու տուր մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :



ԼՐԱԳԻՏՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ԿՈՑԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բէյքայէն տակաւին ստոյգ լուր չկայ, բայց կերեւի որ Ռուսաց ձեռքն ինկած չէ, քանզի եթէ ինկած ըլլար, մայրաքաղաքիս գետապանա-
տունները տեղեկութիւն կուգար։ Սա-
կայն ինկած ըլլալու զորոյններն ուր-
կէ՞ ելած էին, Ղալաթիոյ շահադէ-
տաց երեւակայութեան արդիւնքն էին,
թէ աւելի կարեւոր արդիւնքն էր ին-
քան չգիտցուի։ Առ այժմ պաշ-
տօնական լուրերու գալով, Բէյքայէն
փաշան նոյ. 13/27 թուով կը հեռագ-
րէ թէ Շիրակայի կրճէն մէջ այն օրը
ձերբակալեալ գերեաց խօսքին նա-
յիւրով Բէյքայէն տակաւին Օսման փա-
շային ձեռքն էր։ Սօֆիայէն անցեալ
ուրբաթ առաւ թուով առնուած նա-
մակ մ'ալ կըսէ թէ Օսման փաշան
իւր գիրքերն ամեն տեղ կը պահէ,
և կը հաստատէ թէ տակաւին երկու
երեք ամիս գիւմրիսէն բաւական
պաշար ունի։ սակայն այս տեղեկու-
թեան որչափ արժանահաւատ ըլլա-
լով չենք գիտեր։ Շիրակայի կրճէն
ձիւն կը տեղար, և մերթ Եւրոպ
թմբակները և հրացանի կռիւ կըլլար։
Սիւլէյման փաշան անցեալ եր-
կուշաբթի առաւ թուով կը հեռագ-
րէ թէ յառաջապահաց կռիւները կը
շարունակեն։ Բալամասայի քով բա-
ւական մեծ կռիւ մ'եղեր է, որոյ
մէջ Ռուսաց մէկ գումարտակ թըն-
դանօթաձիգ զօրքը բոլորովին ջըն-
ջուեր է։ Ձիերուորական գծին հա-
րաւային կողմն էլէնայի մօտ Պոլսոյ
ապստամբաց խումբ մ'ի փախուստ
դարձեր է յիսունի չափ մեռեալ թող-
լով։ Ռուսացի և Եւրոպէյի միջեւ ալ
թմբակները մենամարտը կը շարու-
նակէ։

Վիտինի կառավարիչ Սըրբի փա-
շան նոյ. 12/24 թիւ հեռագրաւ մը
հետեւեալ տեղեկութիւնները կուտայ՝
Օսմանեան զօրաց Ռահովայէն ետ
քաշուելուն վրայ։

Կիրակի օրը Ռահովայի վրայ
Ռուսաց ըրած յարձակումը քաշու-
թեամբ ետ մղուելէ ետեւ Ռուսերը
շրջակայ ճանապարհները գրաւելով,
Ռահովայի պահապան զօրքն որոշեր
է լուծի վրայ քաշուիլ։ Նոյն գիշերն
ամեն պէտք եղած պատրաստութիւն-
ներն ընելով՝ առաւօտեան մօտ ետ
քաշուիլ կ'սկսին իրենց բոլոր պատե-
րազմական նիւթերով։ Սակայն Ռուսը
Ռահովայէն ժամու կէս հեռի գլու-
նուող Ակուսթօ գետին կամուրջը
գրաւած ըլլալով, Օսմանեան զօրքը
կամուրջին վրայ սաստիկ յարձակում
մ'ընելէ ետեւ կը տեսնէ որ անցքը
բռնաբարեղ անհնարին էր, ուստի
կորոյն գետին մէկ ուրիշ կողմէն անց-

նիլ։ և որովհետեւ սաստիկ ճախճա-
խուտ ըլլալով անցնին անհնարին
էր, կայսերական զօրքն իւր վրան-
ներն և ուրիշ կարասիները ճահիճնե-
րուն մէջ նետելով, թնդանօթներն
և ուղղամթերաց կառքերն ու վի-
րաւորաց սայլերն անցունել կորոշնէ։
Ռուսը արգելք ըլլալու համար 'ի կո-
ղէ և 'ի թիկանց կը յարձակին, բայց
կայսերական զօրքն հետզհետէ թըն-
դանօթները ճահիճէն անցունելով կը
գիւմրէին Ռուսաց և այսպէս կը յա-
ջողին թնդանօթներուն և քաղաքա-
յին պաշտօնաւորաց հետ նոյ. 10/22
ին լուծ հանել, 'ի բաց առեալ հի-
ւանդ և վիրաւոր կրող քանակներ
սայլեր, երկու ուղղամթերաց կառք
և կառավարական կարեւոր թուղթեր
պարունակող քանի մը անտուկներ,
զորս հոն թողլու հարկադրուեր են։

Գանաւի բանակին հրամանատար
Սիւլէյման փաշայէն նոյ. 16/28 թը-
ւով հեռագիր մը կը ծանուցանէ թէ
Քաղաքէջի Օսմանեան զօրաբաժնին
հրամանատար Ասաֆ փաշան քառ-
սունուիրք վաշտ հետեւակ և վեց
վաշտ հեծեալ զօրք և վաթսունե-
չորս թնդանօթով Ռուսիոյ թագա-
ժառանգ կայսրորդուին բանակեալ
ղին գէմ սպանակաւ շորժում մ'ը-
նելով պատերազմի բռնուեր է Ռու-
սաց հետ։ 'ի սկզբան Ռուսը ետ մըլ-
ուեր են, բայց հետզհետէ օգնու-
թիւն գալով անոնց, կայսերական զօ-
րքը մինչև իրիկուն քաղաքի կռուելէ
ետեւ ետ քաշուեր է։ Այս ճակատա-
մարտին մէջ թշնամոյն կրած կորուս-
տն երկու հազարէն աւելի եղեր է.
իսկ կայսերական զօրաց կորուստն
եղեր է 290 մեռեալ և 834 վիրաւոր։
Բռնուած երկու Ռուս գերիներու
խօսքին նայելով, Ռուսաց զօրութիւնն
50—60 վաշտի կը հասնէ։

Հինգշաբթի օրը ոչ-պաշտօնական
կերպիւ Լուր եկաւ Բ. Դուռը թէ
Ռուսը Օրբանիէի մօտ էլթօրօյի գիւր-
քն առանց պատերազմի գրաւեր են։
Բ. Դուռն ալ Մէհմէտ Ալի փաշայէն
հեռագրով տեղեկութիւն ինդրեց։
Բայց երէկուան վաղը թիւ խօսքին նա-
յիւրով գեռ պաշտօնական տեղեկու-
թիւն մ'եկած չէր։

Իսկ Մուխթար փաշա կը հեռագ-
րէ թէ Կարին ձիւն կը տեղայ և պա-
տերազմական դէպք չկայ։ Կարինէն
նոյ. 3/15 թուով 15 վրէժ ձիւնը թի-
թիթակցին մէկ նամակը կը ծանուցանէ
թէ ինն վաշտ զօրք ալ օգնութեան
հասեր են Մուխթար փաշային, և
բազմութիւ կամաւորք կը ներկայա-
նան, այնպէս որ այժմ քաղաքա-
պահ զօրքը բաւական բազմութիւ ը-
լալէ գտաւ, Ռուսաց վրայ այս առա-
ւելութիւնն ունի որ ամբողջութեանց
մէջ պատասխարեալ է։ Ռուսաց Հէյ-
ման զօրավարը Տէվէ-Պոյնու խանն ի-

շխանած էր Լորիս Մէլիքօֆի եղբոր-
որդի և հեծեալազօրաց հրամանատար
Մէլիքօֆ զօրավարին հետ։ Ռուսը
Տէվէ-Պոյնուի պատերազմին մէջ ին-
կած Օսմանեան վիրաւորներն հաւա-
քելով վաթսուն և ինն սայլի մէջ լը-
ցուցեր և պատգամաւորով մ'Օսման-
եան յառաջապահաց զրկեր են։ Մուխ-
թար փաշային ուղղեալ նամակաւ մը
որ Օսմանեան վիրաւորաց վրայ Ռու-
սաց տարած խնամքը քաղաքավարու-
թեամբ ծանուցանելով յոյս կը յայտ-
նէր որ Օսմանցիք ալ նոյնը կընեն
Ռուս վիրաւորաց։ Ռուսաց հրամա-
նատարն յիշեալ նամակաւ կը խնդ-
րէր Օսմանեան հրամանատարէն որ
վիրաւորեալներն առնուելէ ետեւ
սայլերն ու վիրամակներն ետ դարձը-
ւին, և իրօք վիրաւորեալներն հիւան-
դանոց դրուելէ ետեւ սայլերն ու
վիրամակներն ետ տրուեցան։ Վիրա-
ւորեալք կը պատմեն թէ Ռուսը զի-
րենք լաւ խնամեցին և իւրաքանչիւ-
րին հինգ ռուպլի թղթադրամ պար-
գեցին։ Ռուսաց սպայակոյտէն գլու-
ղապետ մը մեռած էր Կարնոյ վրայ
եղած յարձակման միջոցին, և զին-
ւորական մեծ հանդէսով թաղուած։
Ռուսաց խաղախներն հետազօտու-
թիւն մ'ըրին մինչև Կան գիւղն, որ
Կարնոյ քաղաքէն կէս ժամու չափ
հեռի է դաշտին մէջ՝ Օլթուի ճա-
նապարհին վրայ։ Օսմանեան զօրքն
ալ Տէվէ-Պոյնուի կողմն հետազօտու-
թիւն մ'ըրաւ։ Նոյն գիշերը քանի մը
խաղախ իրենց պահուած տեղէն ել-
նելով Ռաքէթներ արձակած էին Օս-
մանեան գիրքերը գնելու համար։ Մեր
պահակներն ալ անոնց պատասխանե-
լով Մէհմէտի թնդանօթները գողալ
սկսան ուրիշ քանի մ'ամբողջութեանց
հրանօթներուն հետ։ Եւստի մը չափ
այս գողութիւն տեւեց, բայց առանց
հետեւանաց։ Նոյ. 1/13 և 2/14 ին
Օսմանեան սպայից ազդու օրինակ մը
տրուեցաւ։ Մուխթար փաշայի հրա-
մանաւ Տէվէ-Պոյնուի պատերազմին
մէջ երկչոտութիւն ցոյց տուած ըլ-
լալու համար՝ հանգուցեալ Հիւսէյ-
յին Ալիի փաշային քնեկալ և թըն-
դանօթաձիգ զօրաց զնդապետ շա-
սան պէյին, հետեւակազօրաց զնդա-
պետ Մէհմէտ պէյին, և հեծեալազ-
րաց զնդապետի տեղակալ Ահմէտ
պէյին աստիճաններն առնուելով զին-
ւորական ծառայութեան զրկեալ հը-
րատարակեցան։ Բոլոր թղթակիցը
Ահմէտ Մուխթար փաշայի անձնական
քաղաքին կը գուրնէ։ Օսմանեան
հրամանատարը Կարնոյ վրայ եղած
վերջին յարձակման միջոցին՝ թօփ-
ճաղի ամբողջին մէջ անձամբ թնդա-
նօթի մը գլուխ կեցած նշան կառ-
նուր, և վառօգին ծուխներէն ած-
խաղործի պէս սեղան էր։ Գիշեր
ցերեկ անգուլ աշխատութիւնը Մուխ-
թար փաշայի մաքերը ձերմկուցեր

և քանի մը շաբաթի մէջ զայն քանի
մը տարի ձերմկուցեր է։

Հաշտութեան խօսքերը քանի կեր-
թան անկարելիութեան աստիճանի
կը հասնին։ Եւրոպական լրագիրք կը
ծանուցանեն թէ Բ. Դուռը մայրա-
քաղաքիս Գերմանական դեսպան Բայ-
նիւնին հաշտարար միջնորդութիւն
մ'ընել առաջարկելով, իշխանը պա-
տասխանէր է թէ Օսմանեան կառա-
վարութիւնը պէտք է ուղղակի Ռու-
սաց բանակակազմին դիմէ։ Վիէն-
նայի կէս պաշտօնական թերթերն այս
իրողութիւնը կասկածելի ցոյց կու-
տան, և կըսեն՝ որ եթէ Բայնիւն
նը միջնորդութեան բանակցութիւնը
մերժեր է, պատճառն այս է որ Բ.
Դուռն այս միջնորդութիւնն ուղղա-
կի և բացորոշապէս ինդրած չէ։ Մէկ
կողմէ կըսուի թէ Անգլիոյ և Աւստ-
րիոյ հաճելի չլլար, երբ Բ. Դուռն
առանց ուրիշ տեղութեանց հետ բա-
նակցութեան առանձին հաշտութիւն
կընէ Ռուսիոյ հետ, և այս կարծիքն
երկու տեղութեանց նախարարներուն
յայտարարութիւններով ալ կը հաս-
տատուի, քանզի ծանուցած էին թէ
պատերազմող կառէն տկարացած
պիտի ըլլան, մինչդեռ չեղող տեղու-
թիւնը իրենց զօրութիւնը վառնած
չլլալով, կարող պիտի ըլլան իրենց
ձայնը լսել տալ, այսինքն հաշտու-
թիւնն իրենց շահուց նպաստաւոր ը-
նէր։ Սակայն միւս կողմէ ալ կըսուի
որ եթէ Սերվիա շարժի, Աւստրիա
չեղողութիւնը պիտի շարունակէ քա-
նի որ իւր շահուց փնտս չորուի, և
քանի որ Սերվիա Պոնիւրի կողմն երկ-
րակալութեան չձեռնարկէ կամ Ռու-
սաց զօրքը Սերվիա չմտնէ։ Կերեւի
որ վրացայի գրաւումէն ետեւ Աքալէ-
իէֆի յառաջապահ խաղախները մին-
չեւ Սերվիոյ սահմաններն հասեր են՝
առանց Սերվիոյ հողը մտնելու։ Քա-
նի մը լրագիրք կըսէին նաեւ թէ Ռուսը
և Սերվիացիք միացած են։ Բայց մայ-
րաքաղաքիս Սերվիական դորձակա-
տարը կը շարունակէ միշտ Բ. Դրան
ապահովութիւններ տալ իւր կառա-
վարութեան գիտաւորութեանց վրայ։

Նշանակութեան արժանի է Լորս
Տէրպիի մէկ նոր յայտարարութիւնն
ալ, որով կըսէ թէ Անգլիոյ և Հընդ-
կաստանի մէջ հաղորդակցութեան բա-
տոյց դիմն եփրատայ հովտէն չանց-
նի, և կը յարէ թէ քանի որ Սուէի-
շի ջրանցքը չկտրի կամ վտանգի մէջ
չլլայ, Անգլիա ըստ բաւականի հա-
ղորդակցութիւն կընայ ունենալ Հընդ-
կաստանի հետ։ Արդեօք այս յայտա-
րարութիւնն Հայաստանի մէջ Ռուսիոյ
առջև համարձակ ասպարէ՞զ բանալ
է, ապագայ դէպքերը լաւ կընան բա-
ցատրել։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիճենա 28 նոյ .
Պ. Պիւքանան Անդրիոյ կողմէն և
կոմս Անտարտի Աւարտիոյ կողմէն պայ-
մանագիր մ'աւարտողքնցին , որ Անդրիոյ
և Աւարտիոյ միջև հաստատուեալ առեւտրա-
կան դաշնագրութեան պայմանագրին ան-
սահման կերպիւ կերկարէ :

Փարիզ 28 նոյ .
Լրագիրք ոմանք կրսեն թէ Մաք-Մա-
հոն մարտիկան Սրեկից և Լեհաստանի
խնդրոյ լուծման աւելի գործօն կերպիւ
մասնակցելու գիտաւորութիւն ունի :

Լեհաստանէն եկած հեռագրեր կը
ծանուցանեն թէ Ռուսիոյ կառավարու-
թիւնն յիշեալ երկրին մէջ պաշարման վի-
ճակ հրատարակելու միտք ունի :

Լոնտոն 29 նոյ .
Անգլիոյ Պանքան իւր զեղչն հարկերին
4% իջուց :

Յունաստան 28 նոյ .
Կառավարութիւնն եօթն միլիոնի նոր
փոխառութիւն մ'ալ կըքնց :

Մինչև ցարդ 15 միլիոն ծախք ըրած
է զինուորական պատրաստութեանց հա-
մար :

Փարիզ 29 նոյ .
Մաք-Մահոն մարտիկան խմանալով
որ ծերակուտի անդամներէ և երեսիւ-
խաններէ ոմանք ազգային երեսիւխա-
նութեան ապահովութեանը վրայ երկիւ-
ղալի կոտորածներ յայտնեցին , ծերա-
կուտի և երեսիւխանի ժողովոյ նախա-
գահները կանչելով յայտնեց թէ այդ եր-
կրկները ընաւ չիմ չունին :

Լոնտոն 29 նոյ .
Անգլիական Թուրքասթր լրագիրք Լորտ
Տէրալի վերջին յայտարարութիւնը կը
մեղադրեն և կը վախճան որ Անգլիա Հա-
յաստանի մէջ Ռուսաց յաղթութիւննե-
րուն իրեն համար ունեցած հետեւանքը
ճշդիւ չհասկնայ :

Քոլոն 29 նոյ .
Եթէ Բլէյնս ինչայ , կըսէ Քոլոնի
Կառէթը , Գերմանիա միջնորդութիւն
պիտի ընէ զինագազար մը կըքնու հա-
մար , որ առանձնաբար հաշտութիւն կըն-
քելու նախադաւիղ պիտի ըլլայ : Գերմա-
նիա առանձին հաշտութիւն կըքնու խոր-
հըրդին նարստաւոր է , և Պ. Պիւքանք
տէրութեանց կամ դեսպանաց ժողովի
դէմ է : Գերմանիա ապահովութիւն տը-
ւաւ Աւստրիոյ թէ Ռուսիոյ և Թուրքիոյ
միջև առանձնաբար կըքնու հաշտութիւնն
աւելի լաւ կապահովէ Աւստրիոյ շահերը :
Անտարտի կոմսն ալ խոստացաւ Պիւքանք
իշխանին որ տէրութեանց կամ դեսպա-
նաց ժողով չընդունի եթէ առաջարկուի :

Փարիզ 30 նոյ .
Երեսիւխանաց ժողովոյն ձախալորդը
խնդրելով որ այսուհետև երեսիւխանու-
թիւնը լուծելու համար ծերակուտի ժո-
ղովոյն երկու երրորդ մասին քուէն հարկ
ըլլայ , և Մաք-Մահոն մարտիկան ալ
այս խնդիրն ընդունիլ չուզելով , իրաւա-
խօսութիւնը վերստին դժուարացած կե-
րել :

Պէրլատ 30 նոյ .
Կառավարութիւնն որոշեց զեկտ. 13ին
ազգային ժողովը (Սըրաբիան) Գրակույ-
վաց գումարելով երեւմտեց հաշտեցողք
ներկայել :

Լոնտոն 30 նոյ .

Օսմ. Բոնս.	10
Փոթ.	1865 40 4/2
•	1869 40
•	1871 35 5/8
•	1872 47 4/2
•	1873 40
• Եղիպտ.	54 4/8
Անգլ. Բոնս.	97 3/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Պիթիլիկի նախորդ դայմագամ
Ասյան պէյ Եֆենտի (Վանայ դա-
ւաւ) , Ալքաիկի նախորդ դայմա-
գամ Թէվֆիկ Եֆենտի Ատիլճէվադի,
Մէքէսի նախորդ դայմագամ Հիւսէ-
յին պէյ Ալքաիկի , և Քէվարի դայ-
մագամ Օսման Եֆենտի Մէքէսի դայ-
մագամ անուանեցան :

Հինգշաբթի օրը տէրութեան նա-
խարարներն արտաքոյ կարգի ժողով
մ'ըրին Բ. Գուռը :

Իրիկունն ալ կայսերական պալա-
տին երթալով 'ի խորհուրդ գումա-
րեցան ընդ նախագահութեամբ Վեհ.
Սուլթանին :

Երէկ Սէյամըդի արարողութեանէն
ետեւ , որ Մէհմետի միջկիթը կատա-
րեցաւ , Մեծ-Եպարքոն Սպարապե-

տի դուռն երթալով զինուորական
խորհուրդ դամարեց :

Օսմանեան Երեսիւխանի ժողովին
անդամ վահմ. Տօքթօր Սէրվիլէն է-
ֆենտին կարմիր Մահիկի կեդրոնա-
կան մասնաժողովին անդամակցու-
թիւնն ընդ ունելով , առաջին անգամ
նոյեմբեր 21 ի նստին ներկայ գտնը-
ւեցաւ : Մասնաժողովին անդամները
միաձայն չնորհակարութիւն յայտնե-
ցին Սէրվիլէնէ Եֆենտիի իւր լուսա-
ւոր գործակցութիւնն իրենց չնորհե-
լուն համար , և բարեբաղդ համարե-
ցան զիրենք որ այնպիսի բարձր ձիւ-
րերովն ու գիրքով նշանաւոր ան-
դամակց մը պիտի ունենան :

Մայրաքաղաքի Օսմանեան երես-
փոխանութեան հրաժարեալ Հաֆէզ
Մէհմետ պէյին տեղ երբեմն Ալքաի-
նուպօլոյ կուսակալ Իպրահիմ փա-
շան ընտրուեցաւ :

Բ. Դրան Հայադէի երեստարագ-
պաշտօնատարներն արգէն քաղաքա-
յին զինուոր գրուեցան :

Կըսուի թէ Խալի Եֆենտի փաշան
վերջնական կերպիւ մայրաքաղաքէս
մեկնելով իւր բնակութիւնը Եղիպ-
տոսի մէջ պիտի հաստատէ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
18 նոյ. ուրախ իրիկուն	10.37
19 նոյ. շաբաթ առաւօտ	
Եղիպտոս	10.39
Ժամ 6 ին	41
Բուլղիի երկրթադի	Ֆր. 31 30
Թղթադրամ	Իր. 205
ԸՆԹԱՑԱՐ ԱՐԺԵԹՊԱՑ	
Կ. Պոլսի 18 Նոյեմբեր	
Սօսիթէ Ժէնէրալի բաժ. Անդ. Ի. Ի.	3.20
• ֆոխանակութեան	2.24
Կ. Պոլսի Պանքային	3.20
Քրէտի Ժէնէրալ	3.12
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փոթ.	1863 34
•	1865 55
•	1869 50 50
•	1872 18
•	1873 49
Թրամուայ	Օսմ. Իր. 1 40

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Մինչդեռ նմանը չտեսնուած քա-
ղաքական տաղանդ մը Թուրքիոյ Հայ
ժողովուրդը նիւթապէս յոգիս ապաս-
տան վիճակի հասուցած , ամեն մարդ-
իւր օրական ոգեպոհիկն հայրնայն է-
լու դժուարութեանց հետ կ'որոտի և
անստոյգ ապագայի մը հաւանական
վտանգներուն և ալեւից վրայ կը
խորհի սարսափահար , Գարաթիոյ ինք.
բաղին կղերական անդամներն իրենց
անողք կրից դժօնային ներշնչման
միայն մտադիր՝ նոր տաղանդ մ'ալ
յարուցանելու և աղքէն յանդիմանու-
թիւն մասնելու ապրիւրաւութեան
ձեռնարկած են՝ ամեն օրէնք իրա-
ւունք և ակնածութիւն առ ոտն կո-
խելով :

Կը ցաւինք որ Ս. Պատրիարք
հայրը՝ փոխանակ այդ քանի մը կը-
ղերականաց ժողովութիւնը սանձա-
հարող պատժական միջոցներ ձեռք
առնելու՝ Պատրիարքական պաշտօնէն
կը հրաժարի , և այսպէս Պատրիարք-
ները տապալող և աղքէն վրդովող այդ-
անպատկառ խմբակին յանդգնութիւ-
նըն յաջողութեամբ կը պրակէ : Բայց
տեսնենք թէ աղքէն ալ թոյլ պիտի
տալ :

Ահաւասիկ իրողութիւնը :
Այս երեքշաբթի օր՝ «Եկեղեցա-
կան մը» ստորագրութեամբ սպառ-
նական լիտի նամակ մը կը զրկուի Ս.
Պատրիարքին :

Հետեւեալ օրն ալ խղիւղեան Մատ-
թէոս Եպիսկոպոս , Եֆենտի վարդապետ ,
Տ. Սաքիաս և Մամարէսն Տ. Արիս-
տակէս Ս. Պատրիարքին ներկայանա-
լով՝ 20 ի չափ կղերականներէ ստորագ-
րեալ դիր մը կը ներկայեն , պահանջե-
լով որ Միկրեան Տ. Թոմասէն քահա-
նայն Պատրիարքական փոխանորդու-
թեան պաշտօնէն անպատճառ դադ-
րեցնէ : Ս. Պատրիարք հայրն երկու
ժամէն աւելի կը ջանայ յորդորել որ
իրենց այս աղօրէն ձեռնարկէն ետ
կենան , դիմել տալով թէ Տ. Թ. Մը-
կրեան կարեւոր ծառայութիւններ
մատուցած է աղքէն , թէ ինք իւր
փոխանորդին վրայ ըստ ամենայնի
փառհաւթիւն ունի , և թէ Տ. Թ. Մը-
կրեանի դէմ երեսն երեք ամիսա-
տանու թիւններն Ազգային ժողովոյ
որոշմամբ արգէն ընտրութեան են-
թարկուած՝ և քննութիւնն ալ դեռ
ստարտած չըլլալով , չկրնար պաշառ-
նէ դադրեցնել զայն :

Բայց Ն. Սրբադնութեան լսելը
ոչս օրինաւոր դիմագրութիւնները չը
կրնալով աղքէնցութիւն մ'ընել յիշ-
եալ անողք և կեղեցականաց վը-
րաց , վերջապէս կ'ապուլի յայտա-
րարել թէ սոյն բանական ճշման
առջև պիտի պարտաւորի հրաժարի
Ս. Պատրիարքին սոյն յայտարա-
րութիւնն ալ օգուտ մը չընեն , ինք.
նախապաշտօնաւորութիւնն իւր
պահանջման վրայ պիտի կը մեկնի :

Ասոր վրայ , Ս. Պատրիարք հայրն
հինգշաբթի օր դուռն հրաժարա-
կանը կը դրկէ արտաքին գործոց վը-
սեմ նախարարին , որ անձնական տը-
կարութեանը պատճառաւ Ֆրեմադը
իւր ապարանքը կը դառնուի :

Ն. վանութիւնը Ս. Պատրիարքին
հրաժարեալը կարդալով , յորում
Ն. Սրբադնութիւնն իւր անձնական
տկարութեանը պատճառաւ Պատրի-
արքական պաշտօնը շարունակելն այլ
ևս անկարելի ցոյց՝ տուած էր , կը
խնդրէ որ Ն. Սրբադնութիւնը բա-
րեհաճի իւր ապարանքը դալ 'ի տե-
նակցութիւն :

Հետեւեալ Ս. Պատրիարք հայրն
հինգշաբթի օրն իրիկուն ժամը 11
ին միջոցները փութաց արտաքին
գործոց վանմ. նախարարին երթալ :
Խոսքնու նախալով արտաքին գոր-
ծոց վանմ. նախարարը չէ ընդունել
Ն. Սրբադնութեան հրաժարականն
և ասիակրէ որ 'ի սէր աղքէն և առ-
րութեան իւր պաշտօնը շարունակե-
լու հաճի , բայց Ս. Պատրիարքը յան-
ձըն չէ առեր անհնարութիւն ցոյց
տալով :

Կը լսենք նաեւ թէ Պատրիարքա-
կան փոխանորդ Գեր. Տ. Յ. Միկրեան
ալ իւր պաշտօնէն հրաժարել է .
բայց աղքէնի ժողովոյ որոշած և
արգէն սկսուած քննութեան շարու-
նակութիւնը պահանջելէ չպիտի դադ-
րի :

Սոյն ծանրակշիւ խնդրոյն վրայ
մեր խորհրդածութիւնն յաջորդ թը-
ւով :

Երէկ աղքէնի վարչութեան խո-
ւըն ժողովը գումարուելով , Ս. Պա-
րիարքին հրաժարականն ետ առնել
տալու համար խիստ շատ թախան-
ձելէն յետոյ , անդրդուելի կենալը
տեսնելով՝ աղաչեց որ գոնէ մինչև
հրաժարականին պատասխանը Բ.Գըռ-
նէն դալն առ ժամանակեայ կերպիւ
վարէ վարչութեան նախագահութիւ-
նը : Ն. Սրբադնութիւնն ալ հաճեցաւ :
Իսկ հրաժարեալ Պատրիարքական
փոխանորդին պաշտօնն առ ժամանակ-
եայ կերպիւ Գարակէօմիլիկի Արթ .
Տ. Արիստակէս քահանային յանձ-
նուեցաւ :

Թէքիւրադէն եկած լուրերու
նայելով , վերջին անգամ կատարուած
առաջնորդական ընտրութիւնը դժ-
գահութեան տակ թէքիւր Ե. անդույն
ժողովրդեան , որովհետեւ Թէքիւր-
տադի երեսփոխանութեան թիւն՝ որ
'ի սկզբան 42 էր , այսօր 35 ի լիւծ է
և ասոնց ալ 16 ին քուէովը միայն կա-
տարուել է ընտրութիւնը : Այսպիսի
ընտրութիւն մը , եթէ ձիւք է մեր
առած տեղեկութիւնն , ըստ ինքեան
աղօրէն ըլլալով , չկրնար վաւերանալ
վարչութեան կողմէ , մանաւանդ եր-
բոր վիճակին ժողովուրդն ալ դժգո-
հելով յաղիկ սկսած է :

Կը դարմանանք թէ Թէքիւրադի
մէջ Սահմանադրութիւնը դործադ-
րելու և ըստ այնմ առաջնորդական
ընտրութիւն կատարել տալու պաշ-
տօն ունեցող Գեր. ֆիլիպպոս սրբա-
դան , որոյ ուղղութիւնն ու խոհե-
մութիւնն անկասկածելի է , ինչպէս
այս օրինական կարեւոր կէտը նըկա-
տողութեան չէ առած :

Կը յուսանք որ վարչութիւնն օ-
րինաց ճշդիւ դարձադրութեան հա-
մար հարկ եղած անօրէնութիւնն ը-
նելով , Թէքիւրադի մէջ ծագելը ըս-
կըսած յուզման և անկէ հետեւելք
չարեաց առաջքը կը փութայ առ-
նուի :

Սամաթիոյ Հայ ժողովուրդն հե-
տեւեալ խնդրադիրը մատոյց Ս. Պա-
րիարք հօր :

Ամենապատիւ Ս. Պատրիարք հայր
Նախագահ Աղքային վարչութեան
կրօնական Սրբադնութեան ժողովոյ .

Թաղիս քահանայներէն Արթ. Տ.
Խաչատուր կարապետեան հայրն աղ-
քային Հիւսէն-անոյի մէջ մնալու դա-
տապարտուած՝ և ամենայն հնազան-
դութեամբ իրեն համար որոշուած
դատապարտութիւնը բաւական տոնն
կրելէ ետեւ , այս օրերս աշխարհա-
նի զգեստով թաղիս մէջ յանկարծ
երևիլ սկսած է :

Յիշեալ քահանային յանցանքն՝
ինչ որ ալ ըլլայ՝ անշուշտ պէտք էր
ներուիլ իր զեղչն ու ապաշտն 'ի
նկատի առնելով , վասն զի ա՞յլ է մարդ
որ կեցցէ և ոչ մեկիցէն . և թէ Ահադ
խորհրդոյ պաշտօնեայ մը այսպէս
խայտառակուած տեսնելը՝ թաղիս
բարեպաշտ ժողովրդեան կրօնական
զգացումները վերաւորելէ անդին նը-
շանակութիւն չունի , և վերջապէս
Հայ քահանայի մը այս վիճակը՝ թա-
ղիս մէջ զանազան կրօնական հասա-
րակութեանց առջև ծագու ծանակ
ըլլալն՝ զմեզ արգար նախանձայու-
ղութեան մը կը դրդէ :

Իրաց սոյն վիճակը Սրբադնութեան
ժողովոյ հաղորդելով՝ տարակոյս չու-
նիմք , Ամենապատիւ Ս. հայր , որ
յիշեալ Տ. Սաչատուր հօր ցարդ կը-
րած տառապանքը բաւ պիտի հա-
մարի , և ջեր հայրական գըթու-
թեան ակնարկով յանուն փրկառնէ-
ական ներսողութեան միմիկարել պի-
տի հաճիք ըստ օրինի եկեղեցւոյ հաս-
տատելով զինքն իւր պաշտաման մէջ :

Մնամք ակնկալու կատար-
ման խնդրոյ ջերու մի. բարձր
6 նոյ. 1877 Սրբադնութեան ամե-
նապատիւ Նախարար հօր Կառի
(Սրբադնութեան)

ՄԻ ՀԱՐՑ
Ա.ՂԱՐԵԳԵԱՆ ՄԱՐԿԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՐԱՐ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԻ ՏԵՐ ԻՈՐԷՆ
ԵՊԻՍԿՈՓՈՍԷՆ
Արքայան .
Ջեր առնալստութիւնը , որն որ ա-

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՐԻՒՆՍԼԻ ՄԱՐԲԻՉՈՒՀԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՏՈՒ ԿՐԻՍՏՈՍ

Թարգմանեց խ. Ե. Պուրուշոտման

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եֆէնի ճամբի Ձիւնկերէրէր ճատտէսի, թիւ 2 Ս. Դ. և Եղմանեան գրատունը և այլ գրավաճառաց քով: Գին 2 ֆրանք:

ՏԷՔԱՐԳԱՅ

ՃԱՌ ՈՃՈՅ

ԵՒ

ԲՆԱԶԱՆՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆԹԻՒՆՔ

Տէքարգ Գաղղիացի մեծանուն փրկարարին «Գլուխ գործոյն» է, որ Մեծ. Առաքել Շարապիանեանի աշխատասիրութեամբ Հայերէնի թարգմանուելով՝ Արմաշու վանքէն հրատարակուեցաւ գեղեցիկ տպագրութեամբ:

Սոյս գիրքը 272 էրեսէ կը բաժնանայ և կը ծախուի Եֆէնի-ճամբի Ձիւնկերէրէր ճատտէսի, թիւ 2 Ս. Դ. և Եղմանեան գրատունը և գրավաճառաց քով: Գին 2 ֆրանք:

ՉԱՌԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ա.

Գրեց Ներսէսի Գաբրիէլ Պատկանեան

Ընթերցասէր ազգայինք, որ անշուշտ ազգային տաղանդաւոր հեղինակին յիշուածքներ և այլ գործերը կը յիշեն, մեծ հաճութեամբ պիտի կարդան այս նոր գործը՝ որ գարձաւ մեր ազգային պատմութենէն առնուած է:

Կը ծախուի Ս. Դ. և Եղմանեան գրատունը Եֆէնի ճամբի Ձիւնկերէրէր ճատտէսի, թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով: Գին 1 ֆր. 50 ասնթիմ:

ՄԱՐԻՈՆ ՏՐԼՈՐՄԻ ԽՈՍՏՈՒԱՆԱՆԲՐ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓՆԱՔ

Հեղինակ Էմիլ Են Մերգուր

Թարգմանեց Գր. Չէլիկչեան

Սոյն նշանաւոր վէպին Հայերէն թարգմանութեան Գ. հատորն ալ Պոլիս հասած ըլլալով՝ կը ծախուի Եֆէնի ճամբի Ձիւնկերէրէր ճատտէսի, թիւ 2 Ս. Դ. և Եղմանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին 2 ֆր. Ամբողջ գործը չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ:

ԹԱՏՐՈՆ

ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԲԱԶՄԱՊԱՏԿԵՐ

Տղայոց ընթերցանութեան յատկացեալ այս հանդէսը՝ որ աղին թող թող վրայ բազմաթիւ պատկերներով գեղեցիկ և վայելուչ տպագրութեամբ ի յոյս ընծայուած է, կը պարունակէ բարոյական հրահանգիչ և զուարճալի նիւթեր:

Սոյն գործոյն տարեկան 24 թերթերը ամբողջապէս կազմուած, կազմող նուէրի համար ամենէն յարմար և պատուական առարկայ մը ըլլալով, սոյն նպատակին ծառայեցնելու համար ալ գործոյն ստուարտութեանը նայելով՝ գինը ամենաշնչին գումարի մը՝ այն է 1 ֆրանք 30 ասն. գինը կամ որ նոյն է 6 զրջ մէճիսկէ գրամի իջած է, և կը ծախուի Եֆէնի-ճամբի Ձիւնկերէրէր ճատտէսի, թիւ 2 Ս. Դ. և Եղմանեան գրատունը և գրավաճառաց քով:

ԱՍԸԼ ԳԱԶԱՄԻՍ

Վ. Ե.

Թերթէն մուկմաստր օրացոյց 1878 թ. նշինէ միտուս վէ նկէթ իշխն եէ տի պնտ իլավէ:

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց և բերայի ու Կ. Պոլսոյ քաղաք վաճառաց քով և Երևանի քան թիւ 17 Ե. Մ. Տնտեսեանի տպարանը. գին 100 փլյ:



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ՆՈՅՄԵՐԻ 1 ԵՐԵՎԱՆԻ ՈՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ԶՈՅՄԵՐԻ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԿՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Time) and Բաժնէն Ելնող շահեւորները (Dividend recipients). Rows list various names and their corresponding shares.


Կաճառէն Ելնող շահեւորները

Table with 2 columns: Ժամ (Time) and Կաճառէն Ելնող շահեւորները (Dividend recipients). Rows list various names and their corresponding shares.




ՉԵՐՄԻ ԴԵՂ

Տոբթոր Այերի Չերմի գեղը աւերն ու իր իր տեսակ Չերմի իսկոյն կը բժշկէ. չկայ գեղ մը որ ասոր չափ օգտակար ըլլայ Չերմի. Չերմի բանուները պարապ տեղը կը տանջուին քան որ աս գեղը կայ, պէտք է որ ան միջապէս անկէ գործածեն: Արդ էն Պոլսոյ և գաւառներուն մէջ ճանչցուած է աս գեղը ու անով բժշկուողները գիտեն անոր յարգը: Նախ ուրիշ տրամի չափ հէշ Եւրո խմելու է իբրև մաքրողական գեղ ու ետքը աս Չերմի գեղէն (Չերմի չրուած) օրը չորս անգամ մէյմէկ անուշի գրգռող Չերմի հետ խառնելով խմելու է, ան միջապէս կանցնի: Տղայոց աւերի քիչ տալու է. կը ծախուի Կ. Պոլիս Դաւթիան Միլիտեան և ընկերաց Ամբիկայի մաղաղան:



ԱՆԿՈՂԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՆԿԱԿԱԼ

Աղին և հասարակ քարեօրանք երկաթէ և արցիլէ, աժան գինեքով կը ծախուի, Կ. Պոլիս Դաւթիան Միլիտեան և ընկերաց Ամբիկայի մաղաղան:



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իւրիւններուն ամենէն աղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մարի և աղէկ կը գործէ, կը ծախուի Կ. Պոլիս Դաւթիան Միլիտեան և ընկերաց Ամբիկայի մաղաղան:

Table with 2 columns: Ժամ (Time) and Կաճառէն Ելնող շահեւորները (Dividend recipients). Rows list various names and their corresponding shares.

ԻՍԿԻԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԿՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Time), Կաճառէն Ելնող շահեւորները (Dividend recipients), Ժամ (Time), Կաճառէն Ելնող շահեւորները (Dividend recipients). Rows list various names and their corresponding shares.

ՈՐԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Time), Կաճառէն Ելնող շահեւորները (Dividend recipients), Ժամ (Time), Կաճառէն Ելնող շահեւորները (Dividend recipients). Rows list various names and their corresponding shares.

Այս քաղաքը շարաքը երեք անգամ կը հրատարակուի, երեք անգամ ինքնաշարժի և շարաք օրերը: Բաժանորդագրութեան տեղերն են Դաւթիան Միլիտեանի ճատտէսի, թիւ 198, Դ. օրո իսկ Մասիս խմբագրատունը:

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները:

ԻԶՄԻՐ. Ստեփան Եղա Տեղեան. ՆԻԿՈՍԻՒՄ. Խոսրով Էֆ. Եսիճեան. ՊՐՈՒՍՍ. Ստեփան աղա Թանկերեան. ԹԷՐԵՐՏԱՂ. Յովակիմ աղա Ուղուհաւարեան:

ՅՐԱՊԻՉՈՒՆ. Խաչատուր աղա Լաւաճեան ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Չաւարեան:

ՎԱՆ. Կարապետ աղա Նախնեան ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փօթիկեան. ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան:

ՅՈՒՐԵՆ. Յէրհատ աղա Ս. Յէրհատեան ԵՐԶՆԱԿԱՆ. Թաղէս աղա Բաղրաւարեան:

ՍԵՎԵՐՈՒՅԵԱՐ. Արթ. Տ. Ռուբին. ՍԵՐԷ. Զաքարեան ստորագրող ուղեւորներն աւտոգրէն մէկուն հետ կրնան իրար կիցիլ:

ԽՈՒՄԻՅԻՐ-ՏՆՈՐԷՆ

Կ. Ս. ԻԿՈՒՅԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԻՐԱԳՐՈՅ ԴԱՆԱԹԱ ՆՈՐՈ ԽԱՆ